Գրիգ

Ամպերի մասին

Փողոցով քայլելիս երբեք չես իմանա, թե ով կգտնի քեզ: Շրջանցիր ջրափոսերը, շատ ես մտածում, արդեն մոռացել ես տանդ հասցեն... Ձեռքերդ գրպաններումդ՝ անցիր փողոցը, դու ճշմարտություն ես փնտրում, բայց քաղաքը շատ փոքր է քո փնտրածի համար: Քաղաքում կգտնես ագռավներ ու վախեր միայն... Զգույշ եղիր, քեզ լավ նայիր...

Տարածքը դիմավորեց ծառերի շուրջ թափված խնձորներով ու թաց տերևների հոտով: Նայում էի ծառերին, հրճվում, թվում էր՝ ճանաչում են ինձ, գիտեն՝ ում թոռն եմ: Ամեն անգամ, երբ գնում եմ հողամաս, պապիս եմ հիշում, որովհետև ինքն է կառուցել տնակն ու տնկել բոլոր ծառերը: Հողամասը հիմա իմ աշխարհն է, իմ փախուստի վերջին կետը, ուր խնձորենիներ եմ խնամում, սակայն բերքի կեսից ավելին թափվել է... Վերջացնելով աշխատանքը՝ բահը հենեցի պատին, տուն մտա՝ խնձորով թեյ պատրաստելու: Երբևէ խմե՞լ ես խնձորով թեյ, ես եմ հորինել. վերցնում եմ ամենաթթվաշ խնձորներն ու կտրատում թեյնիկի մեջ, աննկարագրելի համ է ստացվում: Աթոռին նստած խմում էի, նայում բարձունքում՝ շեկ բլուրների ֆոնին ձգվող էլեկտրական սյուների տխուր շարանին: Մթնում էր, բռիս չափ աստղերը նշմարվում էին երկնքում, քաղաքում նման աստղեր չես տեսնի... Խմելով ևս երկու մեծ բաժակ թեյ՝ տաք հագնվեցի և շարունակեցի նայել. հեռվում տարբեր կողմերից հաչոցներ էին լսվում, հետո կայարանի կողմից էլեկտրաքարշի ազդանշանը մի քանի անգամ ճեղքեց լռությունը, ու երկաթե անիվների հեռացող ձայնը ինձ նորից ծածկեց թմրության ալիքով: Աչքերս փակ լսում էի խնձորների ընկնելը... Տուն մտա, քունս փախել էր, ծառի ճյուղը քսվում էր պատուհանին, ասես ցուցամատով թակեին, դրսում ոչինչ

չէր երևում, քամին սաստկանում էր, տանիքի թիթեղները՝ դողում: Խնձորների ընկնելը չլսելու համար գրադարակից վերցրի առաջին պատահած գիրքը, սկսեցի թերթել: Ճանճը պտույտներ էր կատարում սենյակում՝ շեղելով ուշադրությունս: Մեծերից էր, համառում էր, երևում էր՝ հեշտ հանձնվողներից չէ, ոչ մի կերպ չէի կարողանում հարվածել: Մտքովս անցավ սրբիչը օդում թափահարել այնքան, մինչև ճանճն ուժասպառ լինի ու կանգ առնի: Ստացվեց, առաջին իսկ հարվածով վերջ տվեցի մեր դիմակայությանը... Ճանճը ասես պատի խալը դարձած լիներ, ժպտացող խալ էր, ոչինչ չէր եղել, պարզապես անշարժացել էր: Նայում էի և մտածում. երևի կյանքն էլ նույն կերպ մեզ հետ է վարվում, քշում է, ուժասպառ անում ու հասցնում վերջին հարվածը: Ճանճին խնամքով փաթաթեցի անձեռոցիկի մեջ, դրեցի գրքի էջերի արանքը...

Գիշերն ակնթարթի պես անցավ, արդեն լուսանում էր, մտովի դեռ ճանճի հետ էի, տպավորությունը, թե ինչ-որ նմանություն կա մեր միջև, հանգիստ չէր տալիս, նայում էի պատի վարդագույն կետին՝ այս աշխարհում ճանճից մնացած վերջին նշանին: Ճնշող մտքերը ցրելու համար դուրս եկա, սառը առավոտը հաճելի էր: Հողամասում առավոտները տարբեր են, չկրկնվող: Գետնին մի քանի խնձոր էր միայն, չնայած ամբողջ գիշեր ընկնում էին: Արագ հավաքեցի խնձորները, շտապում էի թեյ պատրաստել, ծառերը ուրախ էին, որ կամ... Տան դիմաց նստած կում-կում խմելով թեյը՝ հետևում էի յուրաքանչյուր շարժմանը. փոքր միջատներն արթնացել, ինձ չնկատելով՝ ինչ-որ տեղ էին շտապում, կապույտի մեջ կորած երկինքը սահում էր՝ քսվելով հարևան տների անճոռնի, ցցված ալեհավաքներին, նայում էի ու մտածում. ինչ լավ է՝ ոչ հեռուստացույց ունեմ, ոչ ալեհավաք: Հայացքս կանգնեց տանիքին, եռանկյունաձև սրությունը գունաթափվել, սևացել էր, իսկ ստորոտը կարմիր էր մնացել: Վճռեցի, որ չեմ ներկելու. կայարանի բարձունքից նայելիս իսկույն տարբերվում է, ասես բացված կակաչ լինի: Աչքիցս ոչինչ չէր վրիպում, ոչ մի շարժում չէր սպրդում՝ նկատեցի՝ ինչպես կատուն հայտնվեց ցանկապատին, տեսել էր ինձ: Սովորության համաձայն՝ իրար հետ երշիկ կերանք, շոյեցի պարանոցը, սովորել էի ներկայությանը. քանի ամիս է՝ իմ միակ այցելուն էր... Կատուն համառորեն ցատկում էր, փորձում որսալ պատի մողեսին, թվում էր՝ իսկույն կարող է բռնել, բայց ինձ զվարճացնելու համար ներկայացում է սարքել, ժամանակ առ ժամանակ դադար էր առնում՝ համոզվելու՝ արդյոք ստացվո՞ւմ է: Նայում էի՝

չկարողանալով զսպել ուրախությունս, անվերջ ցատկում էր, իսկ մողեսը տեղից չէր շարժվում, ասես իրոք պայմանավորված լինեին...

Հագնելով կոշիկներս՝ ճանապարհը սկսելուց առաջ շտապեցի ջրի մոտ: Չեմ կարող ասել՝ հողամասի տարածքից դուրս գալիս ինչու եմ ամեն անգամ գնում ջրի, ասես եթե ջուր չխմեմ ու չնայեմ քարին, օրս հաջող չի լինի: Մանր քարերը փախչում էին ոտքերիս տակից, արահետը կտրուկ թեքվեց, երևաց ծորակը, ջուրը զվարթ աղմկում էր, լույսի անդրադարձմամբ աչքով անում ինձ: Պապս պատմում էր, որ ժամանակին ոչ քարը կար, ոչ ծորակը, որ տեղադրել է Արտուշ անունով մի մարդ՝ ի հիշատակ Ղարաբաղում զոհված իր որդու: Վերնաշապիկիս թևքով սրբելով բերանս՝ նայում էի քարին, քարը՝ ինձ: Շարունակեցի ճանապարհս, ծառերի ստվերները սահում էին դեմքիս վրայով, մոշ ուտելով քայլում էի դեպի կայարան... Կայարանը մարդաշատ չէր, սպասողներին կարելի էր մատների վրա հաշվել, մեկ անգամ ևս հայացք գցեցի տանս, բարձունքից իրոք կակաչի էր նման: Նստեցի պատի տակ դրված նստարանին: Արդեն քսան րոպե էր՝ էլեկտրաքարշը չկար, սովորական բան էր, պատահել էր՝ ավելի երկար էր ուշացել: Ձանձրույթը ցրելու համար սկսեցի երևակայել, թե տեսնես ինձնից առաջ ովքեր են նստել նստարանին: Փորձում էի վերականգնել նրանց արտաքինը, աչքերի գույնը, պարզել՝ ինչ են սիրում ուտել, ինչ նախասիրություն ունեն: Մտապատկերումս գորշ կերպարանք հայտնվեց, սև մարդ: Ջրալի ոսպնյակների ետևից սառը աչքերն ինձ էին նայում, գլխին անցյալ դարի լայնեզր գլխարկ էր: Պորտֆելը ծնկներին՝ նստած էր, այդպիսի պորտֆել դասախոսներն են ունենում: Վայրկյանը մեկ ժամին էր նայում՝ դաստակը ակնոցի ապակուն կպցնելու չափ մոտեցնելով: Տպավորություն էր, որ տղամարդը մեկնելու համար չի եկել, այլ պատճառ կա, ասես սպասում էր մեկի վերադարձին, երկար ժամանակ է՝ սպասում էր ու զայրույթից չարանում... Կայարանում նոր մարդիկ էին հայտնվել՝ ձեռքներին ճկվող կապոցներ, խնձոր էին տուն տանում: Մտքերով տարված՝ չէի նկատել՝ ինչպես են եկել, սկսեցի զննել, մեծ մասը տարեցներ էին: Հանկարծ ուշադրությունս գրավեց զույգը, որ իրար ձեռք բռնած իմ կողմ էր գալիս, մայր ու որդի էին: Տղան քայլում էր հայացքը դեպի վեր՝ մոր դեմքին.

– Մամ, ինձ նայելիս ամպերը տեսնո՞ւմ ես,– հարցրեց:

Կինն անակնկալի չեկավ, կարծես առաջին անգամը չէր, որ լսում է հարցը, պատասխանեց, թե չի տեսնում: Տղան ցուցամատը պարզելով մոր գլխի վերև՝ ասաց.

– Բա ինչո՞ւ եմ ես տեսնում, երբ քեզ եմ նայում:

...Հետո լսվեց էլեկտրաքարշի ազդանշանը, մոտենում էր, աչքի պոչով զգում էի մարդկանց շարժումը, մեկնելու ժամանակն էր, իսկ իմ հայացքը սառել էր ամպերին...